

# ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՕԼԳԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Դավիթ Անյաղթ, *Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիրի, հին հայերէն բնագիրը՝ հունարէն սկզբնագրով, անգլերէն թարգմանությամբ, առաջաբանը և ծանոթագրությունները Գոհար Մուրադյանի*

[*David the Invincible, Commentary on Porphyry's Isagoge, Old Armenian Text with the Greek Original, an English Translation, Introduction and Notes by Gohar Muradyan, Brill: Leiden-Boston, 2014 (Philosophia Antiqua: A Series of Studies on Ancient Philosophy, vol. 137. Commentaria in Aristotelem Armeniaca. Davidis Opera curantibus Valentina Calzolari et Jonathan Barnes, vol. 3)*]

Լույս է տեսել «Բրիլ» հրատարակչության «Անտիկ փիլիսոփայության» շարքում հրատարակվող հինգհատորյա «Արիստոտելի հայերէն մեկնությունները. Դավիթի երկասիրությունները» մատենաշարի<sup>1</sup> երրորդ հատորը: Այն պարու-

---

<sup>1</sup> Մատենաշարի նախաձեռնողներն ու խմբագիրները Վալենտինա Կալզոլարին և Ջոնաթան Բարնեսն են: Ուսումնասիրությունների հովանավորողն է Շվեյցարիայի Գիտական հետազոտությունների ազգային հիմնադրամը (Fonds national suisse de la recherche scientifique): Արդէն հրատարակվել են ժնևում 2004 թ. փետրվարի 27-28-ին կայացած միջազգային գիտաժողովի նյութերը (*L'œuvre de David l'Invincible et la transmission de la pensée grecque dans la tradition arménienne et syriaque*, Brill: Leiden-Boston, 2009 (Philosophia Antiqua. A Series of Studies on Ancient Philosophy, vol. 116; Commentaria in Aristotelem Armeniaca: Davidis Opera, vol. 1, Textes réunis et édités par V. Calzolari et J. Barnes)) և Արամ Թոփչյանի պատրաստած Դավիթի՝ *Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտելի* գրվածքի ֆինական բնագիրն անգլերէն թարգմանությամբ (*David the Invincible, Commentary on Aristotle's Prior Analytics*. Old Armenian Text with an English Translation, Introduction and Notes by *Aram Topchyan*, Brill: Leiden-Boston,

նակում է Գոհար Մուրադյանի աշխատասիրած Դավթի «Վերլուծութիւն «Ներածութեան» Պորփիրի»՝ Դավթի այն երեք երկերից մեկը, որոնք պահպանվել են թե՛ բուն հունարեն սկզբնագրով, և թե՛ հայերեն թարգմանութեամբ: Աշխատասիրողն ընտրել է բնագրերի ներկայացման մի ձև, որի միջոցով լավագույնս երևան են գալիս երկու բնագրի նմանություններն ու տարբերությունները:

Հայերեն բնագիրը տրվում է զուգահեռ անգլերեն ճշգրիտ թարգմանութեամբ. վերջինիս տողատակի ծանոթագրություններում քննարկվում են հայերեն և հունարեն բնագրի բազմաթիվ տարբերությունները, երբեմն առաջարկվում է կամ թարգմանչի ձեռքի տակ եղած հունարեն բնագրի վերականգնումը (որի հավաստի լինելն ապացուցվում է նմանատիպ հունարեն գրվածքների զուգահեռ հատվածներով), կամ խաթարված հայերեն բնագրի սրբագրումն ըստ առկա հունարենի: Քանի որ հունարեն և հայերեն գրվածքները տարբեր են նաև ծավալով (հայերենում բաց է թողնված սկզբնօրինակի մոտ 20 տոկոսը), հայերենից պակասող խոշոր հատվածները անգլերեն թարգմանութեամբ բերված են առանձին բաժնում, հայերեն բնագրից հետո, իսկ մանր, մեկ նախադասությունից պակաս ծավալ ունեցող հատվածների մասին, ինչպես նշվեց, խոսվում է հայերեն բնագիրն ուղեկցող անգլերեն թարգմանության ծանոթագրություններում:

Հունարեն գրվածքը ներկայացված է առ այսօր միակ՝ Ա. Բուսսեի հրատարակած քննական բնագրի արտատպութեամբ<sup>2</sup>. այն տեղիները, որոնք բացակայում են հայերեն թարգմանությունից, այստեղ տրված են լայնացված լուսանցքով: Եթե հայերենը համահունչ է ոչ թե մայր-օրինակի ընթերցվածներին (որոնք պահպանվել են Բուսսեի հրատարակության հիմքը կազմող KTV գրչագրերում), այլ վկայակոչում են բնագրի այլ ճշուղեր, բնագրում շեղ տառատեսակով բերվում է համապատասխան հունարեն ընթերցվածն, իսկ տողատակում նշվում է այն պարունակող ձեռագրի տառանիշը և բերվում Բուսսեի բնագրի՝ զանց առնված ընթերցումը: Վերջապես, քանի որ վերջին պրակի հունարեն բնագրի հինգ պարբերությունից բաղկացած ավարտը չի պահպանվել, այն վերականգնվում է հայերենից հետադարձ թարգմանութեամբ: Իբրև վերականգման նյութ, ևս օգտագործվում են բառային և դարձվածքային զուգահեռներ տրամաբանական գրվածքներից՝ Հովհաննես Դամասկացու «Տրամաբանությունից», Պորփիրի «Ներածությունից» և վերջինիս՝ էլիասի մեկնությունից, ուստի և վերականգնումը վերին աստիճանի ճշգրիտ և հավաստի է:

Դավթի երկասիրությունները, ինչպես հայտնի է, ընթերցվել և մեկնվել են

2010 (Philosophia Antiqua. A Series of Studies on Ancient Philosophy, vol. 122; Commentaria in Aristotelem Armeniaca: Davidis Opera, vol. 2, curantibus V. Calzolari et J. Barnes): նշված երկու փաստի գրախոսությունը տե՛ս ԲՄ, 20, 2014:

<sup>2</sup> Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen Commentarium, ed. A. Busse (CAG, XVIII, 2), Berolini, 1904, pp. 80-219:

հայկական դպրոցներում ողջ միջնադարի ընթացքում: Մեկնություն տեսական-րից մեկը լուծմունքն էր, որի գրառումը կատարվում էր լսարանում, վարդապետի թելադրությամբ՝ կամ մեկնվող բնագրից զատ, կամ, ավելի հազվադեպ՝ իբրև լուսանցային կամ միջտողային նշումներ բուն բնագրում: Այս վերջին, հազվադեպ տեսակին են պատկանում խնդրո առարկա երկի որոշ ձեռագրերում պահպանված լուծմունքները, որոնք սույն հրատարակության մեջ բերված են բնագրերից հետո՝ հավելվածում: Լուծմունքը հետաքրքիր է նրանով, որ ցույց է տալիս, թե իրականում ինչպես է յուրացվում մեկնվող բնագիրը տվյալ մշակույթում, ինչն է ըմբռնվում և ինչն է անհասկանալի մնում, ինչն է կարևորվում և վերապատմվում՝ հիշողության մեջ լավ տպավորվելու համար և այլն: Քանի որ գոյություն է ունեցել մեկնողական ավանդույթ և նախկինում գրի առնված լուծմունքներն այս կամ այն եղանակով կարող էին ներառվել ավելի նորերի մեջ, ցանկացած լուծմունք կարևոր է իբրև այդ զարգացման մի որոշակի փուլ, որը թույլ է տալիս հասկանալ, օրինակ, թե ինչպես էին հետզհետե վերաիմաստավորվում «հունաբան» լեզվով արտահայտված հասկացությունները: Ուստի և սույն գրքում լուծմունքների հրատարակումը բնավ ավելորդ չէր: Միայն թե, թվում է, ցանկալի էր խոշոր հատվածներում կիրառել հրատարակչական տրոհության նշաններ, ինչպես նաև զգուշացնել ընթերցողին, որ լուծմունքը շատ հաճախ վերաբերում է ոչ թե անմիջապես այն բառին, որը կրում է հղման նշանը, այլ ամբողջ հատվածին, որին պատկանում է նշված բառը:

Գրքի վերջում զետեղված են եռալեզու բառացանկեր՝ հայ տերմինաբանության զարգացումներն ուսումնասիրելու համար մի շատ օգտակար գործիք: Ինքնին հասկանալի է, որ սրանք «հունաբանությունների» ցանկեր են, սակայն ոչ նեղ մասնագետ ընթերցողի համար ցանկալի կլինեի բացատրել բառերի ընտրության սկզբունքը:

Այս պարզ և գեղեցիկ կառուցյին նախորդում է մի արժեքավոր ներածություն, որի առաջին մասը քննական բնագրի հիմնավորումն է, իսկ երկրորդը՝ գրվածքի թարգմանական լեզվի հանգամանակից բնութագիրը. վերջինիս ամենահետաքրքիր բաժինը, թերևս, շարահյուսական «հունաբանությունների» նկարագրությունն է:

Քանի որ այսօր հայագետները սկսում են առավել մեծ ուշադրություն դարձնել քննական բնագրեր կազմելու սկզբունքներին<sup>3</sup>, արժե ավելի մանրամասն դիտարկել Գ. Մուրադյանի՝ բնագրի պատրաստման եղանակը:

<sup>3</sup> Տե՛ս **Bernard Coulie**, “Text Editing: Principles and Methods,” in: *Armenian Philology in the Modern Era. From Manuscript to Digital Text*, ed. **V. Calzolari** with the collaboration of **M. E. Stone**, Brill: Leiden-Boston, 2014, pp. 137-174 (Handbook of Oriental Studies = Handbook of Orientalistik, Section eight, Uralic and Central Asian Studies; vol. 23/1):

Նախորդ, Ս. Արևշատյանի աշխատասիրած գիտական հրատարակութիւնը<sup>4</sup> հիմնված էր Երևանի Մատենադարանում պահպանված հնագույն գրչագրի (ՄՄ 1716/1270 թ.) վրա, որի հետ համեմատվել են ևս շորսը (ՄՄ 1746/1280 թ., ՄՄ 1751/ԺԳդ., ՄՄ 2326 / ԺԳդ., ՄՄ 1766 / ԺԵ դ.) և Վենետիկի հրատարակութիւնը<sup>5</sup> : Երևանի Մատենադարանի մնացած գրչագրերը, թեև, ամենայն հավանականութեամբ, ծանոթ են եղել հրատարակչին, կազմած բնագրում ոչ մի արտացոլում չեն գտել. համենայն դեպս, ոչ մի փորձ չի արվել որոշելու գրչագրական խմբերը, նրանց միջև եղած հարաբերութիւնները և չի հիմնավորվել օգտագործած գրչագրերի ընտրութիւնը: Սակայն անշուշտ, այդ հրատարակութեան առավելութիւնն այն էր, որ Ս. Արևշատյանը համեմատել է «Վերլուծութեան» հայերեն բնագիրը Ադոլֆ Բուսսերի հրատարակած հունարենի հետ և կատարել մի քանի սրբագրում:

Գ. Մուրադյանն իր բնագիրը կազմել է, ուսումնասիրելով շուրջ 50 գրչագիր՝ 46 Երևանի Մատենադարանի ձեռագրերից, երկու՝ Փարիզի և երկու՝ Վիեննայի մատյաններից: Նույն երկասիրութիւնը պարունակող և այլևայլ հավաքածուներում պահվող ևս 23 ձեռագիր մնացել է անմատչելի: Ս. Արևշատյանի օգտագործած բոլոր գրչագրերը, ինչպես և Վենետիկի 1932 թ. հրատարակութիւնը վերստին ամբողջութեամբ համեմատվել են Ս. Արևշատյանի պատրաստած բնագրի հետ. նույն կերպ համեմատվել են Փարիզի Ազգային գրադարանի թիվ 242 և 240: Մնացած 43 գրչագրերն ուսումնասիրվել են մասամբ՝ Ա-է պրակներով և հետագա գլուխների խորագրերով:

Համեմատութիւնը ցույց է տվել, որ հունարեն բնագրին առավել մոտ է ՄՄ 1746, որին իր հերթին շատ անգամ համահունչ է ՄՄ 8722: Գրչագրերի երկրորդ խումբն են կազմում ՄՄ 1716 և ՄՄ 2326, երրորդը՝ ՄՄ 1753 և ՄՄ 1750: Խմբերի «սահմաններն», այնուամենայնիվ, խիստ գծված չեն. երեքն էլ ունեն բազմաթիվ ընդհանուր ընթերցվածներ, կամ խմբի գրչագրերից մեկը, տարբերելով մյուսից, համընկնում է ընթերցվածների որոշ մասով այլ խմբի հետ: Մնացած գրչագրերի զննումը թույլ է տվել առանձնացնել մոտ 40 զույգ, որոնք ունեն առնվազն մեկ՝ մնացած բնագրային ավանդութեանը հակադրվող ընդհանուր ընթերցված: Այս զույգերը նույնպես գնահատված են ըստ համընկ-

<sup>4</sup> **Գալիթ Անյաղթ**, Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիրի, համահավաք ֆինական բնագիրը, քարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանն ու ծանոթագրությունները Ս. Արևշատյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1976 = «Գալիթ Անյաղթ փիլիսոփայի Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիրի», հետևյալ գրքում՝ **Գալիթ Անյաղթ**, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք ֆինական բնագիրը և առաջաբանը Ս. Արևշատյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980, էջ 105-192:

<sup>5</sup> «Գալիթ փիլիսոփայի Ներգիմացոյ Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիրի», հետևյալ գրքում՝ **Կորիւն, Մամբրէ, Գալիթ**. Մատենագրութիւնք նախնեաց, Վենետիկ, 1833, էջ 251-356: = «Գալիթ փիլիսոփայի Ներգիմացոյ Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիրի», հետևյալ գրքում՝ **Գալիթ Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք և թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Գալիթ**, Վենետիկ, 1932, էջ 157-251:

նումների և տարբերությունների քանակի, սակայն այս վիճակագրությունն էլ չի հանգեցնում գրչագրերի որևէ ստույգ խմբավորման: Կիրառվել է մեկ հնար ևս՝ առանձին ընթերցվածների «պատմություն», այսինքն՝ սկզբնական ճիշտ ձևից դեպի սխալականը տանող ընթերցվածների շղթաների վերահառուցումը, բայց այս դեպքում ևս, պարզվում է, զարգացումները միակողմանի ուղղվածություն չունեն. Սկզբնական՝ անսխալ ընթերցվածները պատկանում են տարբեր խմբերի: Այս ամենն ապացուցում է, որ Դավթի այս մեկնության գրչագրական ավանդությունը «բաց» է՝ գրչագրերի ուղղաձիգ՝ անմիջական ծագումնային հարաբերություններն անորոշ են, տոհմածառ կառուցել հնարավոր չէ, քանի որ չափազանց շատ են գրչագրերի միջև եղած ընթերցվածների հորիզոնական փոխանցումները:

Դա միանգամայն սպասելի երևույթ է. Դավթի երկասիրությունն ուսումնական ձեռնարկ էր, որը VI-VII դարից ի վեր ընդօրինակվում էր ոչ թե մեկերկու օրինակով, այլ զանգվածաբար. դրանք բազմիցս սրբագրվում էին ըստ այլ օրինակների կամ գուտ ուսյալ ընթերցողի ըմբռնմամբ (ինչը նույնպես կարող էր նոր աղավաղումների պատճառ դառնալ), սրբագրված օրինակներն իրենց հերթին խաչասերվում էին և նորից սրբագրվում, և այսպես շարունակ՝ մինչև բնագրի տպագրության հանձնվելը: Այս պարագայում, ինչպես իրավացիորեն նշում է աշխատասիրողը, կարիք չկա ներկայացնել բնագրային բոլոր տարբերակները: Ընթերցվածների ընտրության հստակ կողմնորոշիչը հունարեն սկզբնագիրն է<sup>6</sup>. այն ընթերցվածները, որոնք համընկնում են հունարենի հետ, անշուշտ, նախընտրելի են: Ուստի, իբրև հիմք ընդունելով Ս. Արևշատյանի կազմած հայերեն բնագիրը, Գոհար Մուրադյանը սրբագրում է այն, ներմուծելով վերը թվարկած յոթ գրչագրի և Վենետիկի հրատարակության այն ընթերցվածները, որոնք հաստատվում են հունարենով. քննական տողատակն այս դեպքում երկակի բնույթի է՝ այն ցույց է տալիս և՛ հիմնական բնագրի համար ընդունվող ընթերցվածը պարունակող գրչագրերը («դրական») ապարատ), և՛ այլ գրչագրերի տարբերությունները («բացասական ապարատ»): Ըստ հունարենի, սրբագրված են նաև ակնհայտորեն աղավաղված տեղիները: Այս մեթոդով վերականգնվում է հայերեն սկզբնական բնագիրը. միաժամանակ ընթերցողը չի զրկվում գրչագրային տարբերակների հետ ծանոթանալու հնարավորությունից:

Ընդհանրապես, գիրքը պատրաստված է խնամքով և ընթերցողի մասին մեծ հոգատարությամբ: Վստահ ենք, որ Գոհար Մուրադյանի աշխատասիրած հատորն ըստ արժանվույն կգնահատեն այս ոլորտում աշխատող բոլոր մասնագետները:

<sup>6</sup> Թեև այն նույնպես ունի երկար ավանդություն, իբրև համեմատության եզր հայերեն բնագրի համար այն միանգամայն վստահելի է. ինչպես պարզել է աշխատասիրողը, միայն երկու դեպքում է, որ հունարեն բնագիրը կարելի է սրբագրել ըստ հայերենի: